ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Գառնիի ամրոցի սիստեմատիկ պեղումները սկսվել են 1949 թ. և շարունակվում են մինչև այսօր։ Պեղումների ընթացքում պարզվեց, որ Գառնիի ամրոցը բաղմաշերտ է։

Հնագիտական նյութն ընդգրկում է վաղ բրոնզի մշակույթից (մթա. III հազարամյակ) ներառյալ մինչև ուշ միջնադար։

Գառնիի սիստեմատիկ պեղումների արդյունքները հրատարակվել են երեք պրակով։

Առաջին պրակը ամփոփում է 1949—1950 թթ. պեղումների արդյունքները[1]։ Այս պրակում հրատարակված են Գառնիի բոլոր շերտերից հայտնաբերված նյութերը։ Ներկայացվում և վերլուծության է ենթարկվում հայտնաբերված մշակույթն ամբողջությամբ՝ չբացառելով նաև ճարտարապետական հուշարձանները։

Երկրորդ պրակը նվիրված է անտիկ շրջանի մշակույթին և ամփոփում է 1951—1955 թթ. պեղումների արդյունքները[2]։

Այդ պրակում լուսաբանվում են ոչ միայն ամրոցի անտիկ շերտի նյութերը, բաղնիքը մոզաիկ հատակով, այլև ներկայացվում են անտիկ շրջանի դամբարանադաշտի պեղումների արդյունքները։

Գառնիի երրորդ պրակը նվիրված է միջին դարերի նյութերին և ամփոփում է 1949—1956 թթ. պեղումների արդյունքները[3]։

Այստեղ ներկայացված է միջնադարյան դյուղաքաղաքն իր պատմությամբ, տնտեսությամբ, արհեստներով, առևտրով և նյութական մշակույթով։

Ներկա՝ չորրորդ պրակն ամփոփում է 1949—1966 թթ. ընթացքում հայտնաբերված ստորին շերտերի (վաղ բրոնզի դարաշրջանից մինչև ուրարտականը ներառյալ) հնագիտական պեղումներով հայտնաբերված նյութերը և նրանց ուսումնասիրության արդյունքները։

Գառնիի հնագիտական արշավախմբի աշխատանքներին, որոնք կատարվում են Բ. Ն. Առաքելյանի ղեկավարությամբ, սկսած 1949 թվականից, մասնակցել են Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի, հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական աշխատակիցները, պրակտիկանտներ՝ Պետական համալսարանի պատմության ֆակուլտետից, ճարտարապետներ, նկարիչներ, լուսանկարիչներ, վերականգնողներ, որոնց մասին մանրամասն նշված են Գառնիի հրատարակված երեք պրակներում։

---

[1] Б. Н. Аракелян, Гарни, I, Результаты раскопок 1949—1950, Ереван, 1952.

[2] *Նույնի*, Гарни, II, Результаты раскопок 1951—1955 гг., Ереван, 1957.

[3] Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան, *Գառնի, III, 1949—1956 թթ. պեղումների արդյունքները, Երևան, 1962։*